ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 11 » Հոկտեմբեր 2021 թ. N 173-Ա/1

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԵՐԵԽԱ ԽՆԱՄՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՌՆՎԱԶՆ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 15-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել՝ հաշմանդամություն ունեցող կամ առողջական խնդիրներով երեխա խնամող խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և առնվազն երեք տարի խնամատարություն իրականացնող խնամատար ծնողների համար նախատեսված դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն Հավելված N 1-ի:

2. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ դասընթացները կազմակերպել և անցկացնել հեռավար եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ դասընթացի

մասին հայտարարությունը (առանց խնամատար ծնողների անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով հաստատված խնամատար ծնողների համար նախատեսված դասընթացի թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում խնամատար ծնողների ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) դասընթացն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացնել դասընթացն ավարտած մասնակիցների ցանկը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:

2) մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացների վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանին:

11/11/2021

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2021 թվականի 11 նոյեմբերի N 173-Ա/1 հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ ԵՐԵԽԱ ԽՆԱՄՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՌՆՎԱԶՆ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
7	29	1. Տավուշի մարզ, 1 ունկնդիր 2. Կոտայքի մարզ, 1 ունկնդիր 3. Լոռու մարզ, 13 ունկնդիր 4. Երևան քաղաք, 11 ունկնդիր 5. Արմավիրի մարզ, 3 ունկնդիր	Հեռավար	15.11.2021 20.11.2021	24 ժամ